Ինչպես վճարել աբորտի համար
Լոս Անջելեսի Շրջանում

ՈՒՆԵ՞Ք MEDI-CAL

Medi-Cal-ի միջոցով Դուք կարող եք **անվճար** աբորտի՝ հղիության արհեստական ընդհատման հետ կապված բուժում ստանալ՝ **անկախ Ձեր տարիքից**: Medi-Cal-ն իր **տրանսպորտային նպաստների ծառայության** միջոցով վճարում է աբորտի բժշկական խնամքի վայր ուղևորվելու ծախսը:

ՄԱՍՆԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈ՞ՒՆ

Կալիֆորնիայի օրենքը մասնավոր բժշկական ապահովագրության ծրագրերի մեծ մասից պահանջում է փակել հղիության արհեստական ընդհատման ծառայության ծախսերը՝ առանց **համավճարի, նախնական վճարի (deductible) կամ ծախսերը կիսելու որևէ տարբերակի**:

ՉՈՒՆԵ՞Ք ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եթե Դուք ապրում եք Կալիֆորնիայում և իրավասու եք եկամուտ ստանալու, կարող եք աբորտի հետ կապված խնամքի համար անմիջապես ստանալ ժամանակավոր Medi-Cal-ի ապահովագրություն «Ենթադրվող իրավասություն հղի կանանց համար» ծրագրի (PE4PW) միջոցով:
Օգնություն ստացեք այստեղից՝
http://publichealth.lacounty.gov/mch/choi/CHOIContractorListEngSp.pdf

Դուք կարիք չունեք ներկայացնելու անձը հաստատող փաստաթուղթ կամ բնակության վկայական:
PE4PW-ում գրանցվելուց հետո Դուք կարող եք դիմել Medi-Cal-ի համապարփակ ապահովագրության համար և հղիությունից հետո մեկ տարով երկարացնել Medi-Cal-ը:

ԱՄՆ ՔԱՂԱՔԱՑԻ՞ ՉԵՔ

Անկախ փաստաթղթերի կարգավիճակից՝ եկամտի իրավունք ունեցող բոլոր տարիքի ներգաղթյալները Medi-Cal-ի միջոցով համապարփակ առողջապահական խնամքի իրավունք ունեն: Կալիֆորնիան չի տրամադրում ներգաղթի մասին տեղեկությունները դաշնային իշխանություններին, և Medi-Cal-ում գրանցվելը չի վնասի օրինական բնակության իրավունք ստանալու հնարավորություններին:

ՆԱՀԱՆԳԻ ԲՆԱԿԻ՞Չ ՉԵՔ

Անհրաժեշտ չէ, որ Դուք լինեք Կալիֆորնիայի բնակիչ, որպեսզի ստանաք աբորտի՝ հղիության արհեստական ընդհատման հետ կապված խնամք: Սակայն, շատ նահանգներ թույլ չեն տալիս ապահովագրություն աբորտի համար: Լոս Անջելեսի Շրջանում աբորտի վճարումների համար օգնություն ստանալու մասին լրացուցիչ տեղեկությունները **տես «Կալիֆորնիայի և ազգային աղբյուրները» 2-րդ էջում:**

April 2024 (Armenian)

County of Los Angeles Public Health

Ինչպես վճարել աբորտի համար
Լոս Անջելեսի Շրջանում

Ծախսերը փակելու հարցում օգնության կարի՞ք ունեք

- Աբորտի հիմնադրամները մասնավոր կազմակերպություններ են, որոնք կարող են օգնել փակել հղիության արհեստական ընդհատման ծախսերը, ինչպես նաև հոգալ **գրպանից վճարվող և կազմակերպչական ծախսերը**՝ ներառյալ փոխադրամիջոցի, գիշերակացի, սննդի, երեխաների խնամքի, թարգմանչական ծառայությունների, աբորտի դուլաների (օգնող մանկաբարձներ) և այլնի համար:
- **Աբորտի հիմնադրամները չեն ստուգում ներգաղթի կարգավիճակը կամ քաղաքացիության ապացույցը:**

Տեղական և Կալիֆոր-նիայի աղբյուրներ

- **Mother and Child Health Access-ը (MCHA՝ Մոր և մանկան առողջության հասանելիություն)** առաջարկում է առողջության ծախսերը հոգալու վերաբերյալ ուղեցույց և աջակցություն անհատներին ու նրանց մատակարարներին՝ ժամանակին և համապատասխան բուժում ապահովելու համար:
- Օգնում է Medi-Cal-ի, Covered California-ի, Medi-Cal Access ծրագրի և մասնավոր ապահովագրությունների համար իրավասությանը վերաբերող խնդիրների, ծրագրերի տարբերակների և գրանցման համար օգնության հարցերում:
- Կարող է դրամական օգնություն և այլ օժանդակություն տրամադրել աբորտի հետ կապված այնպիսի ծախսերի համար, ինչպիսիք են երեխաների խնամքը, փոխադրամիջոցը, կացարանը և այլն:
- MCHA-ի հեռախոսահամարն է 213.749.4261

- **ACCESS RJ-ը** վերարտադրողական արդարության կազմակերպություն է, որն ունի անվճար, գաղտնիություն ապահովող հեռախոսային գիծ՝ աբորտի և վերարտադրողական առողջության պահպանման հետ կապված այլ կարիքներ ունեցող մարդկանց և բժշկական ծառայությունների մատակարարներին տեղեկատվական աղբյուրներ տրամադրելու համար: Առաջարկում է «ընկերական» (ոչ մասնագետի) խորհրդատվություն և ուղղորդումներ:
- Ապահովում է դրամական միջոցներ և աջակցություն խնամքի, փոխադրամիջոցի, երեխաների խնամքի, սննդի, կացարանի և այլնի համար.
  - Անգլերեն հեռախոսային գիծ՝ 800.376.4636, իսպաներեն՝ 888.442.2237
  - Տեքստերի համար հեռախոսային գիծ՝ 510.925.0335, կայքէջ՝ accessrj.org

Ազգային աղբյուրներ

- **Աբորտի՝ հղիության արհեստական ընդհատման հիմնադրամների ազգային ցանցը (NNAF)** ամբողջ ԱՄՆ-ում 100 անկախ հիմնադրամներից բաղկացած ցանց է, որը տրամադրում է ինչպես դրամական, այնպես էլ կազմակերպչական աջակցություն՝ ներառյալ նահանգից դուրս ճամփորդությունների համար:
  - Աղբյուրներն ըստ նախանգների փնտրեք այստեղ՝ abortionfunds.org/find-a-fund
- **Աբորտին վերաբերող ազգային թեժ գիծը** կարող է տեղեկատվություն տրամադրել ԱՄՆ-ում և Կանադայում հղիության արհեստական ընդհատման ծառայությունների մատակարարների և սահմանափակ դրամական օգնության մասին:
  - Բազմալեզու հեռախոսային գիծ՝ 800.772.9100, զրույցի (chat) թեժ գիծ՝ prochoice.org/patients/naf-hotline

Ձեզ մտահոգո՞ւմ է գաղտ-նիությունը

- Կալիֆորնիայի բժշկական ծառայությունների մատակարարներին **արգելվում է** իրավապահ մարմիններին (նահանգապետի գրասենյակ) **տրամադրել** հղիության արհեստական ընդհատման օգնության դիմող մարդկանց **բժշկական փաստաթղթերը**:
- «Առողջապահական գաղտնի տեղեկատվության» օրենքը (CHIA) Կալիֆորնիայի բնակիչներին թույլ է տալիս պաշտպանել իրենց առողջության մասին տեղեկությունները, նույնիսկ եթե ապահովագրություն ստանում են մեկ այլ անձի ապահովագրական ծրագրի միջոցով:
- Համաձայն CHIA-ի՝ Դուք կարող եք հաղորդակցության գաղտնության վերաբերյալ հայց ներկայացնել Ձեր ապահովագրողին myhealthmyinfo.org կայքի միջոցով:
- Խոսեք Ձեր բժշկական ծառայությունների մատակարարի հետ այն մասին, թե նրանք ինչպես կարող են լավագույնս պաշտպանել Ձեր գաղտնիությունը:

April 2024 (Armenian)

County of Los Angeles Public Health